252

1. «Ես թողեցի մի օրինակ,
Որ դուք իրար ոտքեր լվաք,
Եթե Ես՝ Տերս, այդ բանն արի,
Դուք էլ արե՛ք, այդ է բարին:

2. Լվանում եմ Ես ձեր ոտքերն,
Իմ սիրո մեջ այդ էլ պետք է,
Երանի՜ ձեզ, թե կատարեք,
Դուք էլ Ինձ պես իրար սիրեք»:

3. Այստեղ չկա մեծ ու պստիկ,
Կամ գրագետ, կամ էլ ռամիկ,
Էլ ո՛չ հարուստ, ո՛չ էլ աղքատ,
Իր արյունով ենք հարազատ:

4. Մեկ մարմին ենք մենք Հիսուսով,
Վերստին ծնված նոր կյանքով:
Մեկ հորից ենք քույր, եղբայրներ,
Մեզ տա Աստված ավելի սեր:

5. Թույլ տուր լվամ ես քո ոտքերն,
Որ կատարվեն Տիրոջ խոսքերն,
Հավետ մնանք մտերիմներ,
Լինենք խոնարհ և պտղաբեր:

6. Թող ուժովնան այս քո ոտքերն,
Գնաս ամեն գյուղ, քաղաքներ՝
Վկայելով ամեն մարդկանց.
«Աստված գթած է, դուռդ բաց»:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025